ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«02» «10» 2024թ.**

Ժամը 11:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետ Ա. Ափյան (հանձնաժողովի նախագահ),
բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ա. Թամազյան,
գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ավետիսյան,
դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Կ. Գյուլումյան,
ե. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության տեխնիկական աջակցման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Է. Անդրիասյան,
զ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության կազմակերպման վարչության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Ն. Հակոբյան,
է. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. ՕՐԱԿԱՐԳ.

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով **հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգի** ձեռքբերման նպատակով երկփուլ մրցույթի միջոցով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ** ծածկագրով **երկրորդ փուլի** հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ ներկայացրել է /տես նաև կից գրանցամատյանը/՝

1. «Դի Ջի Բեյս» ՍՊԸ /թղթային/

2. Տվյալներ Ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

«Դի Ջի Բեյս» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած ծրարը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընթացակարգի շրջանակներում եղել են պարզաբանման հարցումներ և դրա վերաբերյալ տրամադրվել է պարզաբանումներ, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել է տեղեկագրում:

4. Տեղեկատվություն՝ հարվերում կատարված փոփոխությունների մասին.

Ընթացակարգի շրջանակներում կատարվել են հրավերի փոփոխություններ և որոնց մասին հայտարարությունները հրապարակվել է տեղեկագրում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 6, դեմ 0 :

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ

«09» «10» 2024թ.
Ժամը 11:00

5. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգի ձեռքբերման նպատակով երկփուլ մրցույթի միջոցով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկրորդ փուլի հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ ներկայացրած՝ «Դի Ջի Բեյս» ՍՊ ընկերության հայտը /ներկայացրած փաստաթղթերը/ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և **«Դի Ջի Բեյս» ՍՊ ընկերության հայտը գնահատվել է բավարար:**

«Դի Ջի Բեյս» ՍՊ ընկերության տեխնիկական առաջարկին տրված գնահատականն է «40» միավորը:

6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ.

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովը հաստատեց գնային առաջարկի բացման նիստի օրը, վայրը և ժամը, այն է՝ 10.10.2024 թվականին ժամը 16:00-ն ՀՀ ք. Երևան , Նալբանդյան 130 հասցեում:

ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման կարգի 93-րդ կետի համաձայն, այն է՝ *<< Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի անդամներն ստորագրում են արձանագրություն: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունը գրավոր ծանուցմամբ՝ էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին: Ծանուցմամբ նաև նշանակվում են գնային առաջարկների բացման նիստի օրը, վայրը և ժամը, բայց ոչ ուշ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը>>,* սույն արձանագրության հաստատման օրը, հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով սույն արձանագրությունը կուղարկի «Դի Ջի Բեյս» ՍՊ ընկերությանը միաժամանակ տեղեկացնելով գնային առաջարկների բացման նիստի օրը, վայրը և ժամը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 10.10.2024 թվականին, ժամը 16:00–ին՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 6, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Ափյան**

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Թամազյան

Ա. Ավետիսյան

Կ. Գյուլումյան

Է. Անդրիասյան

Ն. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Աբասյան

Հաստատված է

ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար

Ա. Ֆիդանյան

«05» 08 2024թ.-ին

Ընդամենը՝ 3 էջ

Կ.Տ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ

Պատվիրատուի անունը՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն

Մրցույթի ծածկագիրը՝ «ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ»

Գրանցամատյանի վարման պատասխանատու՝ Ա. Աբասյան
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Մաս I.

Սահմանված կարգով ներկայացված մրցույթի հայտեր

h/h	Մրցույթի հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է մրցույթի հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման ամիսը, ամսաթիվը	Հայտերի ստացման ժամը	Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրություն
1	2	3	4	5	6	7
1.	«[illegible]» ՍՊԸ	[illegible] [illegible] [illegible] Է/փ 015491905	02.10. 2024թ	10^{35}	[illegible]	[illegible]

Մաս II.

Սահմանված կարգի խախտմամբ ներկայացված մրցույթի հայտեր

h/h	Մրցույթի հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է մրցույթի հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Անհամապատասխանության մասին կցվող արձանագրության համար
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7